Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| ք. Երևան | 24 փետրվարի 2017թ. ժ. 10:00 |

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Է. Սանամյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Հակոբջանյանը |
| | Լ. Օհանյանը |
| | Ե. Սմբատյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստին ներկա էր «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Գրիգորյանը:

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 03/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Մասնակիցների ներկայացրած հայտերի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 03/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝

- «Յու Հեփի» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Կոմիտաս 28ա, 28),
- «ԻՋի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ – (հասցեն՝ իրավաբանական հասցեն ՀՀ Շիրակի մարզ, գ. Երազգավորս, գործ. հասցեն ք. Երևան, Ազատության 24, 3-րդ հարկ, 343 սենյակ),

1.2. «Յու Հեփի» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարների մեջ, ծրարների վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. « Յու Հեփի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը:

1.4. Ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, երկու պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Յու հեփի» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 6 585 000(վեց միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, հանդիսանում է ԱԱՀ չվճարող:

1.6. «ԻԶի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարների մեջ, ծրարների վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.7. «ԻԶի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը:

1.8. Ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.9. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «ԻԶի Փրոքյուրեմենտ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 5 400 000(հինգ միլիոն չորս հարյուր) ՀՀ դրամ, հանդիսանում է ԱԱՀ չվճարող:

Հարց 2. Մասնակիցների ներկայացրած հայտերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Երկու մասնակիցների Մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

2.2 Քանի որ տվյալ տեխնիկական բնութագրով նախատեսված գնման համար 2017 թ-ի ընթացքում նախատեսված է ավելի քիչ գումար քան բավարար գնահատված Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, և բացակայում էր մասնակիցներից մեկը, Համաձայն ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կարգի կետի 5-րդ ենթակետի, հնաձնաժողովի նիստը կասեցնել:

2.3 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին, բավարար գնահատված հայտ ներկայացված մասնակիցներից առաջին և երկրորդ տեղ մասնակցին որոշելու համար, էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով վարվող միաժամանակյա բանակցությունների մասին:

2.4.Բանակցությունները նշանակել 2017 թ-ի մարտի 3-ին ժամը 14:00-ին «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ում, ք Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

| | |
|---|---|
| Նախագահ | Է. Սանամյան |
| Անդամներ՝ | Ս. Հակոբջանյան |
| | Լ. Օհանյան |
| | Ե. Սմբատյան |
| Քարտուղար՝ | Ա. Պետրոսյան |